

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿՈՄԻՏԵԱՍԸ ԱՔՏՈՐՈՒՄ. 1915 ԹՎԱԿԱՆ (ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

«...Ոչ է պարմությիս ճշմարիտ առանց ժամանակագրութեան...»:

Մովսես Խորենացի

Նունվար 1/14, Կ. Պոլիս. - Ուսանող Ադավնի Մեսրոպյանը իր ընկերուհիների հետ այցելում է Կոմիտաս վարդապետին շնորհավորելու նրա Ամանորը:



«Այդ օրը,- գրում է Ա. Մեսրոպյանը իր հուշերում,- Կոմիտասի շնն փունը փոխված էր... երգ ու երաժշտություն լսել էին: Երաժիշտը շրջապատված էր իր մրերիմ ընկերներով, որոնցմե Միամանթոն կիսոսեր գորակոչի նորանոր իրապեններու (հրամաններու) մասին:

«Թանկագին բարեկամ,- ասում է Միամանթոն Կոմիտասին,- ես թուրքին զինվոր չեմ երթար... Կյանքիս կտակը բեզ...

-Ոչ,- պարասխանում է Կոմիտասը,- ես քեզ թուրք բռնակալներուն զինվոր փոխ չեմ, ոչ ալ խորամանկ թուրք կառավարությունը մեզ պեսները ճակար թշուղն է»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին»,
Երևան, 1960, էջ 303:

Նունվար 2/15, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը», փրճ «Կոմիտասական»,
գիրք I, Երևան, 1969, էջ 246:

Նունվար 3/16, Կ. Պոլիս. - Կոմիտասը դոկտոր Միոսյանի այրմում գրառում է «Տողիկ» խորագրով սրեղծագործության նուրագրության երկրորդը:

Մարգարիտ Բաբայանը վերջինիս այրմից արտապրում է այս «Տողիկը» և 1932 թվականին «Անրիպ մեղեդի մը Կոմիտաս վարդապետին» մակագրությամբ հրատարակում է Կ. Պոլիսի «Ընդարձակ տարեցույց» Ս. Փրկչի հիվանդանոցի» պարբերականում իր «Նուշեր Կոմիտաս վարդապետին շուրջը» խորագրով հոդվածում:

Ժամանակին նա «Տողիկը» ներկայացնում է «արվեստագետ պ. Հարություն Սինանյանին» և ցանկանում է իմանալ նրա կարծիքը: «Երաժշտական այս պարամիկը,- ասել է Սինանյանը,- կարճ բայց տխուր ու մելամաղձուր մեղեդի մըն է, որ եթե երկու անգամ նվագվի, ազգային եղերգության մը ոգին կարտահայտե, վայրկյան մը թախծության հուզումով թափարկուն»:

«Ընդարձակ տարեցույց Ս. Փրկիչ հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1932, էջ 134:
ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարան:

Հունվար 9/22 ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի (25-30 անձ) մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը», րևն «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 16/29, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը», րևն «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 23/5 փետրվար, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը», րևն «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 29/11 փետրվար, Կ. Պոլիս. - Վարդանանց տունի առիթով Ազգային ժողովասրահի մեջ Կեղրոնական վարժարանի կողմից տրված հանդեսին մասնակցում է Կոմիտաս վարդապետը և «փր գրած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայում է ունկնդիրներին»:

«Օրացույց», Ս. Էջմիածին, 1915, 29 հունվարի:
«Տաճար», Կ. Պոլիս, 1915, N 21, էջ 455:

Հունվար 30/12 փետրվար, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը», րևն «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Փետրվարի սկիզբ, Ադանա. - Թուրք բարձրաստիճան մի պաշտոնյա իր մոտ է հրավիրում քաղաքի հարուստ հայերից մեկին և ասում է նրան. «Նայոցդ գլխուն նոր փոթորիկ պիտի պայթի»:

Գրիգորիս ծ. վ. Պալաթյան, «Նայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 74:

Փետրվար 6/19, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահի մեջ Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պատմությունը», փրճ. «Կոմիտասական»
գիրք 1, 1969, էջ 246:

Փետրվար [12-13], Կ. Պոլիս. - Իթթիհապի կենտրոնում Թալաթի նախագահությանը գումարվում է նիստ: Գլխավոր քարտուղար Նազըմ բեյը իր զեկուցման մեջ պահանջում է.
«Պեպք է հայ ազգը արմարախիլ ըլլա, մեր հողին վրա անհար մը անգամ չմնա, հայ անու-
նը մոռցվի... Հայերեն անհար մը չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»: Ջարդը
նը մոռցվի... Հայերեն անհար մը չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»: Ջարդը
կազմակերպելու նպատակով սրեղծվում է «Շոյակ գործադիր հանձնախումբ» (Բեհակեղ-
ղին Շաքիր, Նազըմ բեյ Մելանիկի, Շյաքրի բեյ): Հանձնախմբի որոշմամբ բանաբից ազադ-
վում ու հավաքագրվում են «Թեշքիաթը մահսուսեի» (Հարուկ կազմակերպություն) կոչվող
խմբերը, որոնք պեպք է իրականացնեին բռնագաղթն ու ջարդը:

Մելվան Ջարև Բիֆաթ, «Օսմանյան հեղափոխության մուր ծայրեր...»,
Երևան, 1990, էջ 98: «Ազդակ», Քյոտոբ, 1964, N 40:

Փետրվար 13/26, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պատմությունը», փրճ. «Կոմիտասական»
գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Փետրվար 14/27, Կ. Պոլիս. - «Տաճար» պարբերականի հերթական համարում փրվում է հաղորդագրություն «Կեդրոնական վարժարանի կողմե, ազգային ժողովարանում» Վարդանանց փրնի առիթով փրված հանդեսի մասին, որին մասնակցել է նաև Տ. Կոմիտաս վարդապետը, իր երգած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայելով ունկնդիրներին:

«Տաճար», Կ. Պոլիս, 1915, հմր 21, էջ 455:

Փետրվար 18, Կ. Պոլիս. - Իթթիհապական կենտրոնը («Ջեմիեթ») գաղտնի հրահանգով հանձնարարում է. «Չայիի թույլափրվի, որ հայ մը օգնության և պաշտպանության արժանանա»:

Անպրոնյան Ա., «Մեծ ոճիրը», Բոստոն, 1921, էջ 130-133:
«Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 7, էջ 425:

Փետրվար 25/10 մարտ, Կ. Պոլիս. - Պեհակեպրին Շաքին նամակով հայտնում է. «Ջինվորական հրամանատարությանը հարկ եղած հրահանգները փրված են սպանությանց գործերու կարգադրությանց համար»:

«Ազդակ», Քյոտոբ, 1964, հմր 40:

Փետրվար 27/12 մարտ, ուրբաթ, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր մշակած «Պարարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պարարագի պատմությունը», փրճ. «Կոմիտասական»
գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտ 2, Ադանա. - Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ն գաղտնի ճանապարհով լուր ստանալով հայության հանդեպ Թուրքիայի կառավարության կողմից նախապարաստավոր տեղահանության մասին, շրպավով այցելում է Սիրիայում և Պաղեստինում բանակի հրամանատար Ճեմալ պեյին և խնդրում է լրացուցիչ տեղեկություններ իր ստացած լուրերի մասին:

Գրիգորիս ծ. վ. Պալաթյան, «Նայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 75-77:

Մարտ [3-4], Ադանա. - Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ն խորհում է իր ստացած լուրերի մասին տեղյակ պահել Զավեն Պապրիարքին: Գիշերը իր մոտ է կանչում հույժ վարահելի վաճառական Վարդան Փրեյանին և հանձնարարում է նրան տեղյակ պահել Կ. Պոլսո Պապրիարք Զավեն Տեր-Եղյանին Թուրքիայում նախապարաստավոր հայերի տեղահանության ու կոտորածի մասին:

Նույն տեղում:

Մարտ [2-6], Կ. Պոլիս. - «Նովակիմյան տուն» նորաբաց փառանում լույս է տեսնում Թեոդիկի «Ամենուն փարեցույց» փարեգրքի հերթական՝ ութերորդ հատորը, որտեղ «Նայ արվեստը երեկ և այսօր» ընդհանուր խորագրի փակ գեղեղված է «Կոմիտաս Վ. ի Բարիզ» հաղորդագրությունը՝ նվիրված 1914 թվականի հունիսի 1-ին Փարիզում երաժշտական միջազային գիտաժողովում Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսություններին:

Տարեգրքում հրատարակված է նաև Կոմիտասի «Բժշկություն երաժշտությամբ» (մեկ էջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2359 համարի ձեռագրեն) վերնագրով հողվածը՝ գրված 1914 թվականին:

Վարդում տեղ է գտել նաև Կոմիտասի մշակած «Ով մեծասքանչ դու լեզու» և «Երի, երի, երի ջան» ժողովրդական երգերի նուրագրությունները:

Թեոդիկ, «Ամենուն փարեցույց», Կ. Պոլիս, 1915, էջ 141-151:

Փետրվար-մարտ, Կ. Պոլիս. - Կոմիտասը լուսանկարվում է Թերլեմեզյանի արվեստանոցում:

Աջ ձեռքը հենած աթոռի կռնակին...

«Զվարթնոց», 1925, հմր 6-7, էջ 255:

Մարտ 6/19, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պապարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պապարագի պատմությունը», փն՝ «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտ 8/21, Կ. Պոլիս. - Կիլիկիո Սահակ Բ Կաթողիկոսի հանձնակարար Վարդան Փրեյանը, հաղթահարելով մի շարք արգելքներ, հասնում է Պոլիս և տեղահանության փազնապալի լուրը հայտնում է Զավեն Պապրիարքին:

Գրիգորիս ծ. վ. Պալաթյան, «Նայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

Հունվար-մարտի սկիզբ, Կ. Պոլիս. - Զինվորագրության պարճառով երգչախմբի ցրվելուց հետո, սրեղծված կացության թելադրանքով Կոմիտասը որոշում է «Պարարագի երգեցողությունները նոր ի նորո շարադրել» և իր նոր կազմած երգչախմբի կարողությունը նկատարի ունենալով «Ցերեկը գիշերին խառնելով փոքրիկ օրգանի առջև գլուխը հակած, մոմիցը պլպլացող լույսով ան գրեց ու ջնջեց, գրեց ու ջնջեց, մինչև որ լսեց հինավուրց այս երգուն մինչև իր որոնած հնավանդ ձայները...

Իր աշակերտները նույնքան խանդավառ ամեն ուրբաթ հեկհե կաճապարեին հասնել Ղալաթիո եկեղեցին, հարակից մեկ սենյակ և լսել ջանալու այս պարզ եղանակներուն թագնըված այնքան հուզող ներդաշնակությունները»:

«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտի [9-10], Կ. Պոլիս. - Կիլիկիայից սրացված փազնապ հարուցող, հայության փրկաբերական վերաբերվող լուրի առթիվ, Զավեն Պարրիարքը այցելում է Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Վերջինս հանգստացնում է պարրիարքին՝ հավաստելով սրացված լուրի իբրև թե անհիմն լինելը:

Պարրիարքը իր սրացած փրեղկությունը հայրնում է Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ին: Պարրիարք Գ., «Նայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

Մարտի սկիզբ, Կ. Պոլիս. - «Երկու-երեք ամիսների ընթացքում,- գրում է Միհրան Թումանյանը,- Պարարագի խմբական մասը ամբողջովին վերածնվում էր Կոմիտաս վարդապետի կողմից... Մնում էր սարկավազի և քահանայի բաժինները միացնելու ընդհանուր փորձը, որը պետք է իրականացվեր Ծաղկազարդի կիրակի օրը»:

Մ. Թումանյան, «Պարարագի պարմությունը»: ՏՆՍ «Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

Մարտի 13/26, Կ. Պոլիս. - Միամանթոն այցելում է Կոմիտասին: Զրույցի հիմնական թեման հանդիսանում է թուրք ոստիկանության կողմից «Ամենուր փարեզրքի խմբագիր Թեոդիկի ձերբակալությունը»: «Կարծես թե անոնք,- գրում է գրույցին ներկա, հուշագիր Աղավնի Մեսրոպյանը,- կխոկային ահավոր փետապարկերի առջև... Տարիներ ի վեր առաջին անգամ ըլլալով Կոմիտասը կրեսնելիք այդ աստիճան ընկճված»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Ե., 1960, էջ 304:

Հունվար մինչև 14 մարտ, Կ. Պոլիս. - Կոմիտասի աշակերտներն ու սաները «ամեն ուրբաթ հեկհե,- գրում է խմբի մասնակից Միհրան Թումանյանը,- կաճապարեին հասնել Ղալաթիո եկեղեցին հարակից մեկ սենյակը, սերտելու և լսել ջանալու այդ պարզ եղանակներու մեջ թագնված այնքան հուզող ներդաշնակությունները: Երբեմն շաբաթու մեջ ալ սաները ու աշակերտներն ոմանք կհավաքվեին վարդապետի փանը և նույն օրը կամ գիշերը շարադրված սևագրություններուն վրա երգի փորձեր կընեին»:

Այսպես երկու կամ երեք ամսվա ընթացքին «Պարարագի խմբական մասը ամբողջովին վերածնված էր արդեն: Կոմիտասը սարկավազներու և մեներգի» բաժինները, որ առանձին սերտված էին, միացնելու ընդհանուր փորձը:

«Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

Մարտի [14/27], Կ. Պոլիս. - Թալեաթի, թագաժառանգ Մեջիպ իշխանի և բարձրաստիճան ալ անձանց ներկայությամբ փեղի է ունենում «Թուրք օջախի» հերթական գրական-երաժշտական հանդեսը:

Բացման խոսքով հանդես է գալիս «Թուրք օջախի» նախագահ Նամբուլլահ Ուպիի պեյրը: Ներկայացնելով իր հեղինակության և կարգապահության, բանախոսը անդրադառնում է Կոմիտասի մեծությանը, բարձր է գնահատում նրա գործադրած ջանքերը և ցուցաբերում է նրան հարգանքներով: Արժեքավորելով նրա վաստակը՝ բանախոսը կոչ է անում թուրք հոգևորականությանը հետևել նրա օրինակին: Այնուհետև խոսելով Թուրքիայի մշակութային կյանքում հայ մշակութականության ունեցած դերի մասին, ըստ ամենայնի բարձր է գնահատում ներդրված ավանդը:

Նախագահի բացման խոսքից հետո դաշնամուրի նվագակցությամբ ելույթ է ունենում Կոմիտասը և կատարում է «Կռունկ», «Նով արեք սարեր ջան» և «Կալի երգ» մշակումները: «Մաշալլահ, Աստված չար աչքից հեռու պահի...», դահլիճից լսվում են թուրքերեն բացականչություններ:

Ըստ հուշագրողի հավաստիացման, Կոմիտասը կարդացել է բանախոսություն և կատարել է իր մշակած թուրքական ժողովրդական երգերից մի բանիսը:

«Էջմիածին», 1968, N 3, էջ 46-48, «Արածակ», Փարիզ, 1943, էջ 66:

Մարտի 15/28, Ծաղկազարդի կիրակի, Կ. Պոլիս. - Կոմիտասի ղեկավարած երգչախումբը հավաքվում է կենտրոնական վարժարանի ամֆիթատրոնում, կատարվում է «Պատարագի» վերջին միացյալ փորձը: «Այդ օրը,- պարմում է փորձի մասնակիցներից մեկը,- Պատարագի ամբողջական փորձը սկսավ հեշտորեն ընթանալ: Նասած էինք վերջավորության՝ գոհանամբ ըզ-ձեն Տեր-ին: Սկզբնական երկու մասերը մեջընդմեջ, մեներգ և խմբերգ, գմայլելիորեն շաղաղված կերգվեին»:

«Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

Մարտի սկզբից մինչև 20, Կ. Պոլիս. - Զարուհի Գալենբյարյանը Դանիել Վարուժանին իր երկյուղն է հայտնում իր թիկնապահների «ներքին զգացումներում և հայադյաց բնագոյներում» վերաբերյալ: Վարուժանը նրան հանգստացնում է: «Տակավին նախորդ երեկո,- ասում է նա,- Զոհրապը Թալեաթին հեղինակ-ժուռնալի բոքեր խաղացեր են, լավ են իր թիկնապահական տրամադրությունները» մեր վերաբերյալ:

Գալենբյարյան Զարուհի, «Կյանքիս ճամբեր», Անթիպիս, 1952, էջ 98-100:

Մարտի 2/13 ապրիլ, (հ.տ) ճրագալույց Զարկի, Կ. Պոլիս. - Ղալաթիոն եկեղեցու կամարների փակ առաջին անգամ Կոմիտասի ղեկավարած 25-30 հոգուց բաղկացած երգչախումբը հնչեցնում է «Նինավուրց երգերու Պատարագը»,- գրում է Կոմիտասի սան, Պատարագի մասնակից Միհրան Թումանյանը:

«Էջմիածին», 1968, հմր 3, էջ 44-45:

«Կոմիտասական», գիրք առաջին, 1969, էջ 248-249:

Մարտի 22/4 (հ. փ.) ապրիլ (կիրակի), Կ. Պոլիս. - Հայության խոուն բազմության ներկայությամբ Կոմիտաս վարդապետի գլխավորած եզգախումբը Ղալաթիո եկեղեցու կամարների փակ կատարում է Ս. Հարություն Պարարագի երաժշտական դասը:

«...Վարդապետի հրաշափառ շունչով օծրված հինավորց երգերու Պարարագը,- գրում է Պարարագի ունկնդիր Ն. Ճ. Սիրունին,- մարտցվեցավ Ղալաթիո եկեղեցիի հնարույր կամարներուն փակ...»:

«Էջմիածին», 1969, հմր 3, էջ 45:

Մարտի 23/5 ապրիլ, Կ. Պոլիս. - Զարկի երկրորդ օրը Իսթաբուլական Թեմական սրահի մեջ փեղի է ունենում Կոմիտաս վարդապետի համերգը, ուր ներկաների հոգին գինովանում էր Կոմիտասի անուշ երգերով:

«Էջմիածին», 1968, հմր 3, էջ 44:

Մարտի 15-30, Կ. Պոլիս. - Արաբաբառ «Սալահ» թուրքական լրագրի մեջ թուրք մրավորական Համբուլլահ Մուպիին դրվարական հողված է հրաբարակում մարտի 14/27-ին «Թուրք օջախում» Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսության մասին:

«Էջմիածին» 1968, հմր 3, էջ 47-49:

Ապրիլի 2/15, Կ. Պոլիս. - Թալեթի, Էնվերի և Նազըմ բեյի ստորագրությամբ հրաման է ուղարկվում փեղական իշխանություններին՝ հայերին բնաջնջելու և արաբական անապարները բռնելու վերաբերյալ:

«Հայ ժողովրդի պարմություն», Ե., 1981, հ. 6, էջ 553:

Ապրիլի 4/17, Կ. Պոլիս. - Ճրագալույցի Ավագ շարաթ երեկոյան Կ. Պոլսի Ղալաթիո եկեղեցում առաջին անգամ կատարվում է Կոմիտաս վարդապետի նոր մշակած «Պարարագը»:

Կոմիտաս, «Պարարագ», Ե., 1997, հ. 7, էջ 123-124:

Ապրիլի 7/20, Էջմիածին. - Տաճկաց Հայաստանում կիրառվող դաժան կոպորաձևները և կաթողիկոսի հասցեով փեղ հասած վշտախառն դիմումները հիմք են դառնում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն հեռագրով պաշտոնական դիմումներ հղի Կովկասի փոխարքա կոնս Վարանցով-Դաշկովին, Ռուսաց Արարաբին գործոց նախարար Մազանովին, Իսթաբուլի թագավոր Վիկտոր Էմանուել Երրորդին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, Անգլիայի թագավոր Գևորգ Չորրորդին, Ֆրանսիայի հանրապետության նախագահ Պոնկարեին:

«Արարաբ», Էջմիածին, 1915, Բ-Գ., էջ 170-175:

Ապրիլի 7/20, երեքշաբթի, Կ. Պոլիս. - Նկարի ունենալով, որ քաղաքական իրավիճակի պարճառով Կ. Պոլսում դրությունը լարված է, Հսայան սանուց միությունը նպարակահարմար է գտնում թուրք վիրավոր գինվորների օգտին Կոմիտասի մասնակցությամբ փրվելիք ցերեկույթը հեարածգել:

«Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը,- գրում է Սիրունին,- թե հեարածգած ենք հանդերը: Լավ եք ըրեր, մրմնջեց, ու այլ ուրիշ խոսք չըսավ»:

«Էջմիածին», 1968, N 1, էջ 17:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս. - Վաղ առավոտյան Սիրունին վստահելի աղբյուրներից լուր առնելով, որ այդ օրը «պիտի բացվեն ոստիկանապետներուն դրկված գոց պահարաններ», շտապում է Կոմիտասի մոտ: «Գեշ երազ եմ տեսած Սիրունի,- ասում է նրան Կոմիտասը,- այսօր անպարճառ բան մը պիտի պարահի... Թող պարահի,- ասում է Կոմիտասը,- իրմն բաժանված պահուն»:

«Նոցեկան իր անդորրությունը,- շարունակում է Սիրունին,- կապշեցնե զիս: Քիչ անգամ մարդը կրնա այդքան քաջ ըլլալ փոթորիկը մոտեցած արեն»:

«Էջմիածին», 1968, N 1, 1ջ 48:

Ն. Սիրունու բերած տագնապալից լուրը սրանալուց հետո, օրվա երկրորդ կեսին, Կոմիտասը երգչախմբի փորձը ղեկավարելու համար մեկնում է Ղալաթիո եկեղեցի:

Կոմիտասը երգչախումբը նախապարաստում էր, Կարմիր կիրակիին ապրիլի 12-ին, Ղալաթիո եկեղեցում փրվելիք հանդիսավոր Պապարագի համար:

«Մութը իջած էր և ամեն ոք կաճապարեր իր տեղը հասնիլը,- պարմում է Միհրան Թումանյանը... Իսկ անոնք, որ Բերայի կողմերը կրնակեին, վարդապետի շուրջը բոլորված, խոսալով ու խնդալով կրարձրանային Ղալաթիո գառիվերեն, դեպի Բերա և Բանկլաթ»:

Թևոդիկ, «Ամենուս փարեցույց», 1926, «Էջմիածին», 1968, N 4, 1ջ 28:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս. - Զավեն Պապրիարքին այցելում է գերմանական դեսպանատան պաշտոնյա դոկտոր Մորթմանը, որը ի պաշտոնն պեպք է կապ պահպաներ Պապրիարքարանի հետ: Վերջինս առաջարկում է Պապրիարքին հայ, թուրք և գերմանացի հանձնաժողովներ ուղարկել գավառները, համերաշխության կապերը ամրապնդելու համար:

«Էջմիածին», 1968, N 4, 1ջ 29:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս. - Գիշերը ոստիկանները ձերբակալում են Կոմիտաս վարդապետին, փանում են կենտրոնական բանար և նետում են «Մյուսիաներու խովուշը»:

Կոմիտասը հուսադրում է այնտեղ գտնվող բանարարկալներին, ամբողջ գիշեր մխիթարում է լացող դոկտոր Թորգոմյանին:

«Էջմիածին», 1968, N 4, 1ջ 32-34:

«Արև մուրթ», Փարիզ, 1946, N 5-6:

«Նասոթ», 1935 հոկտ. 27, N 2946:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս, գիշեր. - Զինվորական ավտոբուսները քաղաքի հեռավոր ու մոտակա արվարձաններից և թաղերից խումբ-խումբ մտավորական կալանավորներին փոխադրում են կենտրոնական բանար:

«Էջմիածին», 1968, N 4, 1ջ 32-34:

Ապրիլ 11/24, Կ. Պոլիս. - Ոստիկանության նախապես կազմած ցուցակով Կ. Պոլսում ձերբակալում են 235 մտավորականների, որոնց թվում Կոմիտասին, Վարուժանին, Միամանթոյին, Ռուբեն Մևակին, Ռուբեն Զարդարյանին և այլոց:

Ձերբակալությունները շարունակվում են նաև հաջորդ օրերի ընթացքում: Ձերբակալվածների թիվը հասնում է 800-ի: Նրանց մի մասին ուղարկում են Չանդրի, մյուսներին՝ Այազ:

«Նայ մոռովրդի պարմություն», Ե., հ. 6, 1ջ 553-554:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, առավոտ. - Կոմիտասի վանեցի սպասավորը ամբողջ գիշեր սպասում է Կոմիտասի վերադարձին: «Առբու կանուխ րեսնելով, որ Կոմիտասը դեռ չի դարձած, կփութա դոկտ. Նագաշյանի փունը, գրեթե հևալով և այնքան հուզված», որ չի կարողանում մի բառ արքայասանել: Վերջապես նրան հաջողվում է խոսել և կարողանում է ողբագին շեշտով ասել.

- Տարան, փոթթոր, փարան...
- Տո՛, ի՛նչ փարան:
- Նայր Սուրբ փարան:
- Տո ա՛յ փղա, ո՛վ փարավ:
- Բոլիսները փարան, գիշերը փարան...

«Էջմիածին», 1968, N 4, էջ 32:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս. - Կոմիտասի մերձավոր բարեկամ Կարո Ուշագլյանը առավոտյան մտնում է Բանկլաթի ծանոթ դեղատունը՝ իր բարեկամի մոտ: «Ներս մտավ բժ. Ա. Նագաշյանը,- պատմում է Ուշագլյանը,- գլխաբաց և շփոթ: - Տղաք, Կոմիտաս վարդապետը փարած են այս գիշեր... Ե՞մած իրարու նայեցանք, ո՛չ մեկ նշանակություն կրցանք փայլ եղածին: Քիչ վերջ ուրիշներ եկան և սկսան թվել ուրիշ կալանավորներու անուններ, բոլորն ալ հանրածանոթ մտավորականներ: Մեր գարմանքը վախի փոխվեցավ»:

«Արագած», 1943, էջ 66-67:

Ապրիլ 12/25, Կարմիր կիրակի, Կ. Պոլիս. - Ղալաթիո եկեղեցում առավոտյան հոգևոր արարողության ավարտից հետո Կոմիտասի աշակերտները ըստ սովորության այցելում են իրենց սիրելի վարդապետին: «Դեռ չէինք մտրեցել Կոմիտասին,- պատմում է Թումաճանը,- երբ դիմացնին կելլե իրենց ընկերներն մինը, որ առանց կանգ առնելու կփսփսա...

- Ծուրով փուններդ գացեք... հեռացեք... իրարմն զարվեցեք...

Չհասկացանք թե ինչու:

Նասնելով վարդապետի փունը, սեղմում են զանգակը: Վարդապետի ծառան բացավ դուռը:

Այլաված կմկմաց.- Խայր սուրբին փարան...

«Կոմիտասական», գիրք առաջին, էջ 249-250: «Էջմիածին», 1968, N 4, էջ 31:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, առավոտ. - Բանրի դռները բացվում են և ներս է գալիս Կոմիտասը. «Երբ մեզ մոտ եկավ Կոմիտասը,- գրում է Ա. Անտոնյանը,- իր վիճակի վրա չէր խորհեր, կամ գոնե ներքին վրդովմունք մը մատնող բառ մը չարտասանեց... հույս ուներ, թե այդ կարակը երկար չի փնտր...»:

«Արև մուրթ», 1947, N 6, էջ 2:

Ապրիլ 12/25, կիրակի. - Ջորանոցային կյանքի առաջին օրը... «Մեկնե մեր խմբին մեջ ներշնչումի պես կծնի հավաքականորեն աղոթելու պետքը: Իսկույն կհավաքվինք մեր բնակությանը սահմանված սրահը... Մեկ քանի մոմերու վախկոտ լույսերուն փակ... քահանան Ավետարան կկարդա, պատվելին փառաբանությունը կընն, աշխարհականը շարական

կերգն և Կոմիտաս վարդապետը «Տէր ողորմեան» կաղերսն. «Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց ազատութիւն»:

Շամբաճյան Մ., «Նայ մտքին հարկը եղևոսին», Նալսպ, 1947, 1, 9 54:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս. - Կոմիտասին 192 ձերբակալվածների հետ ոստիկանապնից արևափոխում են Կ. Պոլսի կենտրոնական բանօր: Ձերբակալվածներին արտոնվում է դուրս գալ բանօրի բակ և «բաց բարեբու վրա» միայն թուրքերենով նամակ գրել ընտանիքն՝ խնդրելով անկողին, դրամ, սպիտակեղեն և ուրելիք:

«Արևմուտք», 1946, N 6, 1947, N 7-8:

Նույն օրը, երևկոյան. - Ոստիկանության արևմտյան Պեպրի բնի և բանօրի արևմտյան Իբրահիմ էֆենդիի կարգադրությամբ բակ են կանչվում ձերբակալվածները: Նանձնարարական ցուցակով առանձնացնում են 71 մարդ, որոնց թվում՝ Միամանթոյին, Ռուբեն Զարդարյանին, Գեղամ Բարսեղյանին, Տիգրան Չոկյուրյանին:

Տեղավորելով կառքերում՝ փանում են անհայտ ուղիով: Մնացած ձերբակալվածներին՝ Կոմիտասին, Վարուժանին, Տաղավարյանին, Ճանկույանին, Շահրիկյանին, բոլորին շարք են կանգնեցնում և սվինավոր զինվորների հսկողությամբ գլիշերը, Գյուլիոնի ծառուղիով սուլթան Ահմեդի, Այա Սոֆիայի հրապարակներով փանում են Մարա Պուրնուի նավամարտայր:

«Արևմուտք», 1946, N 47, 6, 7-8, 12:

Երբ թույլատրում են, որ աքսորականները կարող են նամակ գրել, ըստ Ենուվթ Շահի վկայության Կոմիտասը գրում է երկու բարօր: Մեկը իր փան հասցեով ապահովաբար Կարապետ վարդապետին, իսկ մյուսը՝ Ամերիկյան դեսպանապան թարգման Արշակ Շմավոնյանին: «Վարդապետը,- գրում է հոդվածագիրը,- ծանոթ դեմք մըն էր Ամերիկյան դեսպանապան մեջ, ուր շարք կսիրեին զինքը: Տիկին Մորկը թոռնու հաճախ կհրավիրեր զայն իր երեկոյաններուն և Կոմիտասը կերգեր ու կնվագեր ընդունելության ընթացքին»:

«Արևմուտք», Կ. Պոլիս, 1947, N 7, 1, 9: «Էջմիածին», 1968, N 4, 1, 9 35:

Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, գլիշեր, բանօր. - Կարգացվում է արտոն գնացողների երկրորդ ցուցակը՝ Տիրան Բելեկյանից հետո կարողում են երեք վարդապետների՝ Պալազյանի, Ղովհաննես Կարապետյանի և Կոմիտասի անունները:

Բակում հավաքված խումբը հրամանի համաձայն Կյուլիանների ծառայիս ուղիով ուղևորվում է Մարայ Պուրնուի նավամարտայր:

Կալանավորները փեղավորվում են Շիրքեթը խայրիյեի թիվ 42 շոգենավի մեջ:

«Արևմուտք», 1947, N 13, 16 փետրվարի, 1, 9 7:

N 42 շոգենավով փանում են բանարկյալներին: Տիրան Բելեկյանը, դոկտոր Թորգոմյանը, Նայկ Խոճասարյանը և Կոմիտաս վարդապետը փեղավորված էին առաջին կարգի սրահում: Այսպես է գալիս նաև Բյուզանդ Բեյյանը:

Կոմիտասը նստած էր դոկտոր Տաղավարյանի և բժիշկ Թորգոմյանի միջև. «Երկու բժիշկները կուլային,- գրում է «Արևմուտքի» հոդվածագիրը,- Կոմիտասը մեյ մը մեկուն, մեյ

մը մյուսին կողդեր շար անհանգիստ արտահայտությամբ մը վառված աչքերը: Երբեմն Տաղավարյանի կամ Թորգոմյանի կողմը հակվելով, բաներ մը կմրմնջար, թերևս մխիթարության կամ քաջալերության խոսքեր...»:

«Արև մուրք», 1947, մարտ 2, N 15, էջ 7:

Գիշերը Շիբեթի թիվ 67 շոգենավով Կյուլիանեի բարաքից վերցնում են կալանավորներին ու Սարայ Պուրնուեն անցնելով բռնում են անձանոթ ուղղություն: Նավն ուղևորվում է դեպի Նայդար-Բաշայի նավահանգիստը, ուր սպասում են շոգեկառքին:

Կալանավորների մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը:

Նույն տեղում:

Ապրիլ 13/26, առավոտյան. - Սարայ Պուրնուի ձերբակալվածներին տեղավորում են Շիբեթի թիվ 67 շոգենավում: Նրանց մտք են բերում նաև կառքով այստեղ հասցված մյուս 71 ձերբակալվածներին և նրանց բոլորին միասին փանում են դեպի Նայդար փաշայի երկաթուղային կայարանը:

«Արև մուրք», 1946, N 6, 1947, N 7-8:

Ապրիլ 13/26, Նայդար Փաշա. - Տեղավորվելով գնացքում ձերբակալվածների բարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը) Նիկոմեդիայի ու Պիլեճիկի վրայով գիշերը հասնում է Հսկիշեթի:

«Արև մուրք», 1947, N 18:

Ապրիլ 13/26, կեսգիշեր. - Հսկիշեթիում երկու ժամ մնալուց հետո այստեղ կազմվում է կալանավորների ցանկը՝ Պարթիարքարան ուղարկելու համար: Կեսգիշերին գնացքը Հսկիշեթիից մեկնում է Անկարա:

«Արև մուրք», 1947, N 18, էջ 7:

Ապրիլ 13/26, երեկո. - Աքսորականների քարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտասը) հասնում է առաջին հանգրվանին՝ Աավլիի խան:

«Լքմիաճին», 1968, N 7, էջ 5:

Ապրիլ 13/26, լուսարաց. - Կալանավորների գնացքը հասնում է Նիկոմեդիա:

Կոմիտասը մյուս հոգևորականների հետ գտնվում էր Բ կարգի վազոնում, այստեղ էին նաև Քելեկյանը, Նագաշյանը, Քեչյանը, Թորգոմյանը, Տաղավարյանը և այլոք:

Նիկոմեդիայում Կոմիտասը, Նովհանես և Պալազյան վարդապետները դիմում են ներկայացնում կառավարությանը, որ իրենց համար որպես աքսորավայր որոշվի Արմաշի վանքը:

«Արև մուրք», 1947, N 17 (մարտ 16), էջ 8:

Ապրիլ 13/26, առավոտ. - Գնացքը կանգ է առնում Անկարային չհասած Սընճան Քեռ փոքր կայարանում:

Յուցակով 71 հոգու առանձնացնում և փանում են Այաշ:

«Արև մուրք», 1947, N 18, էջ 8:

Նույն օրը, երկու ժամ անց. - Գնացքը կալանավորներին հասցնում է Էնկյուրա (Ան-
կարա): Այսպես կալանավորներին գնացքից իջեցնում և փրկավորում են ձիակառքերի մեջ:
Թնորաբանչյուր կառքում փրկավորում են երեքական անձ և հայրնում են, որ կառքերը
տողերովում են Չանդրը:

«Արևմուտք», 1947, N 20 (ապրիլ 6), 19 7:

Ապրիլ 13/26, երեկո. - Կալանավորների բարավանը ձիակառքերով փարվում է Ռավլի
խան բնակավայր:

Նույն փրկում:

Ապրիլ 14/27, Ռավլի խան. - Խիստ ծարաված կալանավորների և նրանց փանդների
խմելու ջրից օգտվելու ժամանակ փրկելի է ունենում հեյրեյալ միջադեպը: Պարզվում է, որ
կառապանն ու ժանդարմները դույլերի պակասի հետևանքով ծանր վիճակի մեջ են ջրհո-
րից ձիերին ջուր փայր համար: Այդ ժամանակ ծարաված կալանավորները նույնպես մո-
տենում են ջրհորին՝ իրենց ծարավը հագեցնելու համար: «Իրենցմեն ամենն անհամբերը,-
գրում է Արամ Անպոնյանը,- Կոմիտասն էր»: Դույլով փախի են ջրհորի ջուրը, սակայն գա-
վաթ կամ որևէ այլ հնարավորություն չկար ջրից օգտվելու համար:

Ճիշտ այն պահին, երբ Կոմիտաս վարդապետը «շրթունքը ցցած» ձեռքը մեկնում է ջրով
լիքը դույլին, թուրք ժանդարմներից մեկը բիրտ հարվածով Կոմիտասի ձեռքից կոպտորեն
խլելով ջրով լեցուն դույլը՝ ջուրը շփում է Կոմիտասի երեսին: Ջուրը սկսում է կաթկթել մո-
տուսից: Այլալված Կոմիտասը գգում է ընդհարման վրանցը և երկու քայլ նետվում է ետ:
Միջադեպն ունենում է ցնցող վախճան Կոմիտասի համար:

«Արամանի», 1947, մայիս 4, N 24, 19 8:

Ապրիլ 14/27, Ռավլի, երեկո. - Թուրք ժանդարմի գործադրած բռնությունից հետո Կո-
միտասի մոտ սկսվում է ջղաձգության բռնկում:

«Արամանի», 1947, ապրիլ 27, N 3, 19 7:

Ապրիլ 15/28. - Աքսորականները հասնում են Գելենջիկ և 150 հոգով փրկավորվում են
գորանոցում:

Շամփաճյան Միքայել, «Նայ մարտին հարկը ևղևոնին», Կ. Պոլիս, 1919, 19 46:

Նույն օրը, Գելենջիկ. - Կոմիտաս վարդապետի մոտ նորից փրկելի է ունենում ջղաձգու-
թյան բռնկում:

«Արամանի», 1947, ապրիլ 27, N 23, 19 7:

Նույն օրը, գիշերը. - Կոմիտաս վարդապետի մոտ ջղաձգությունը կրկնվում է:
Նույն փրկում:

Ապրիլ 15/28, արշալույսին. - Աքսորականները Գելենջիկից մեկնում են Չանդլի:
«Արամանի», 1947, ապրիլ 27, N 23, 19 7:

Նաջորդ օրերին. - Կոմիտասի վիճակը ծանրանում է. «Կրսեին թե այլև ժանդարմներով չի հեղաթրվում բնավ» և իր մտավախությունը նրանց մասին բողոքովին անհեղափոխ է. սակայն շարունակ խոսում է Պոլսում թողած իր ձեռագրերի վրա՝ «...պոռապով թե ի՞նչ պիտի ըլլան իր աշխատությունները»:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 10:

Ապրիլ 16/29, Չանդլի. - Աքսորականները Չանդլիի գորանցի մեջ մնում են յոթ օր: Չորրորդ օրը եկեղեցուց բերել են փալիս մի Ժամագիրք և երեկոյան կապարում են ժամասացություն: Կոմիտասի շղամզությունը դադարում է: Ութերորդ օրը փրվում է գորանցից դուրս քաղաքի մեջ ապրելու իրավունք:

«Էջմիածին», 1968, N 8-9, էջ 99:

Ապրիլ 16-26. - Աքսորականները 11 օր ապրում են Չանդլիի մեջ...

«Էջմիածին», 1968, N 7-9, էջ 6:

Ապրիլ 19/2 մայիս, Չանդլի. - Կոմիտաս վարդապետը եկեղեցում մատուցում է Ս. Պարարագ: Ավերարանը համբուրելու պահին, Բյուզանդ Քեչյանը և դոկտոր Թորգոմյանը մոտենալով Կոմիտասին, նրան հայտնում են, որ սրացվել է հեռագիր նրան աքսորից ազատելու մասին: «Պարվական պարարագիչի դեմքը հանկարծ պայծառությամբ մը շողաց: Իր ուրախությունը չէր կրրնա ծածկել, նույնիսկ խոռն բազմության առջև, ինչը որ կցուցներ, թե մեր վիճակը որչափ երկյուղ պարստած էր իրեն»: Այդ նույն երեկոյան հեռագիր է սրացվում նաև Քելեկյանի ազատվելու մասին:

Թևողիկ, «Ամնուն փարեկոյց», 1922, էջ 40

Ապրիլ 22/5 մայիսի, Չանդլի. - Զորանոցային կյանքից հեքո, առաջին կիրակի օրը բոլորը մեկնում են փայտաշեն մատուռ՝ «Զորանոցի հսկաները,- գրում է Շամբաճյանը,- առանց խնկարկության էին: Կոմիտաս վարդապետը և յուրայինները փյշող փղծկումի մխիթարող խոսք կուրան մեր հոգիներուն»: Քաղաք ելնելես փասը օր վերջը մեզմե ութը հոգի-նոց խումբ մը եկած հրամանի վրա Պոլիս կվերադառնա: Նոր ակնկալություններու ասպարեզ մըն է, որ կրթացվի ամննուս համար»:

Շամբաճյան, «Նայ մտքի հարկը եղևոսին», Նալսպ, 1947, էջ 62

Ապրիլ 24/7 մայիսի. - Բանտից Կոմիտասը նամակ է գրում Կարապետ վարդապետին:

Նույն օրը. - Կոմիտաս վարդապետը նամակ է գրում նաև Ամերիկյան դեսպանատան թարգմանիչ, հայագրի Արշակ Շամվոնյանին:

Նույն օրը, երեկոյան. - Մեծերեհանի բանտից երեկոյան Պազլի խանին ազատում են և նրա անկողինը հասկացնում են Կոմիտաս վարդապետին:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 34:

Ապրիլ 26/9 մայիս, առավոտ. - Սրացվում է ազատման հրաման և Կոմիտաս վարդապետը՝ իր յոթ բախարակիցներ Բյուզանդ Քեչյանի, Արամ Անտոնյանի, Նայկ Խոջասար-

յանի, Վահրամ Թորգոմյանի, Միքայել Շամբաճյանի, Քելեկյանի ու Պալազյանի հետ ազատվում են բանարից:

«Էջմիածին», 1968, N 5, էջ 6:
«Ամենուն փարեցույց», 1922, էջ 40:
Շամբաճյան Շանթ, 1918, N 5, էջ 7:

Ապրիլ 27/10 մայիս, Երկուշաբթի, Չանդլի. - Կոմիտասն իր բախարակիցների հետ ազատորեն շրջում է քաղաքում:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

Ապրիլ 28/11 մայիս, Գալենճիկ. - Աքսորից վերադարձող Կոմիտասը և իր ընկերները Երեկոյան հասնում են մուրակա գյուղաքաղաք. «Թեև ուշ հասանք,- պարտում է Բյուզանդ Քեչյանը,- հայ ընտանիք մը չթողուց, որ աղքատ խանը գիշերենք և փաթ կերակուրներով հյուրասիրեց մեզ կես գիշերվան մտք:

Թևողիկ, «Ամենուն փարեցույց», 1922, էջ 42-43:

Ապրիլ 29/12 մայիս, Գալենճիկ. - Աքսորականների խումբը ազատվելով բանարից իր ժամանակը անց է կացնում այս գյուղաքաղաքում:

Նույն փրկում:

Ապրիլ 30/13 մայիս, Անկարա. - Ազատված քսորականները 16 օր հետո, Նամբարձման փոռի օրը, կրկին հայտնվում են Էնկյուրայում (Անկարա):

«Նամբարձման փոռը,- գրում է Բյուզանդ Քեչյանը,- վայելեցինք Էնկյուրիի եկեղեցիին մեջ: Թաղական խորհուրդը մեզի նախաճաշով մը հյուրասիրել է Երբը առաջնորդեց Ս. Ասրվաճաճնի վանքը»:

Թևողիկ, «Ամենուն փարեցույց», 1922, էջ 43:
«Էջմիածին», 1968, N 10, էջ 52:

Նրանք մեկնում են Ս. Ասրվաճաճնի վանք, որտեղ մեծ բազմություն էր հավաքվել Կոմիտասին լսելու համար: Նանդեսից հետո 60 հոգու համար բացվում է ճոխ սեղան, մի դեռարի աղջիկ երգում է, որին Կոմիտասը փայլա է իր խորհուրդները:

Մայիս 2/15, Կ. Պոլիս. - Շաբաթ օրը, Երեկոյան, Կոմիտաս վարդապետը հասնում է Կ. Պոլիս:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

Մայիս, Կ. Պոլիս. - «Աքսորից քանի մը օր ետքը» Կոմիտասը վերսկսում է իր սովորական աշխատանքը: «Ձեռքն առավ Ջուղայի «Պատարագը» մշակելու և մաքրելու համար: Այցելուներ ալ կունենար,- գրում են ակնամարտիկները,- սակայն ո՛ր էին նախկին շենշող օրերը:

Վարդապետը վերսկսած էր իր սովորական կյանքը: Կաշխատեր, կգրեր, կնվագեր, կսրբագրեր: Միայն ապրուստի մրահոգություն ուներ, թեև չէր ուզեր հայտնել ոչ ոքի: Ոչ միայն հարուստ չէր, այլև եկամտի աղքատներ ալ չուներ, քանի որ դադարած էին համերգներն ու դասերը»:

«Էջմիածին», 1968, N 10, էջ 55-56: